

ՀՏԴ 911.2(479.243)

Ֆիզիկական աշխարհագրություն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վիլեն ՄԱՃԱՐՅԱՆ, Յուրի ԱՌԱՔԵԼՅԱՆ, Տաթևիկ ՄԱՃԱՐՅԱՆ

Բանալի բառեր. սողանք, լանջ, հովիտ, մասնատման խորություն, խտություն, թեքություն, կողմնադրություն, գրունտ, ապար, կավ, ավազակավ, արգիլիտ, սողք, բեկվածք, սեյսմիկա:

Ключевые слова: оползень, склон, долина, глубина расчленения, густота, крутизна, экспозиция, грунт, порода, глина, суглинок, аргилит, скольжение, розлом, сейсмика.

Keywords: landslide, slope, valley, depth and density of relief fragmentation, steepness, exposition, ground, rock, clay, loam, mudstone, slip fault, seismic.

В. Сафарян, Ю. Аракелян, Т. Сафарян

ОБ УСЛОВИЯХ ФОРМИРОВАНИЯ ОПОЛЗНЕЙ ТЕРРИТОРИИ НКР

В статье рассмотрены условия, которые способствуют формированию оползней в республике. Отмечены роль густоты и глубины расчленения рельефа, крутизны и формы склонов, их экспозиции, тектонических разломов и наличия гидротермально измененных горных пород, воздействия сейсмических сотрясений территории республики а так же физико-географических условий. Отмечено так же роль экономической деятельности человека в процессе формирования новых оползней и активизации старых. Приведены примеры оползней в пределах НКР.

V Safaryan, Yu. Arakelyan, T. Safaryan

THE FORMATION CONDITIONS OF LANDSLIDES IN THE REPUBLIC OF NAGORNO-KARABAKH

This article sets out the conducive conditions of the landslides formation in the studied area. It is represented the depth and density of relief fragmentation, steepness and exposition of the slopes, fault lines and hydrothermal amended rocks, the impact of seismic movements, as well as the physical-geographical conditions. Moreover, it is given the role of human activity in the process of formation of new landslides and their influences on previous activations. There have been given some examples of landslides in the territory of the NKR.

Հոդվածում քննարկված են ԼՂՀ տարածքում սողանքների ձևավորմանը նպաստող պայմանները: Ներկայացված են տարածքի ռելիեֆի մասնատման խորության և խտության, լանջերի թեքության և կողմնադրության, բեկվածքների և հիդրոթերմալ փոփոխության ենթարկված լեռնային ապարների, սեյսմիկ տատանումների ազդեցության և ֆիզիկաաշխարհագրական պայմանների դերը: Տրված է նաև մարդու տնտեսական գործունեությունը, որպես նոր սողանքների ձևավորման և նախկինների ակտիվացման գործոն: Բերված են ԼՂՀ տարածքում առկա սողանքների օրինակներ:

Սողանքների ձևավորումը ԼՂՀ տարածքում պայմանավորված է տարածաշրջանի աշխարհագրա-երկրաբանական պայմաններով, ինչպես նաև տարածքի զարգացմամբ պլիոցեն - չորրորդականի ժամանակաշրջանում: Լեռնային ապարների սողանքային տեղաշարժերը հնարավոր են որոշակի պայմանների՝ գեոմորֆոլոգիական, երկրաբանական, ֆիզիկա-աշխարհագրական և մարդածին պայմանների առկայության դեպքում:

Սողանքների ձևավորման մեջ առավել զգալի են գեոմորֆոլոգիական պայմանների դերը: Սրանք պայմանավորված են ռելիեֆի ձևաչափական տարրերի (մասնատման խտության, խորության, լանջերի թեքության և կողմնադրության) ցուցանիշների արժեքներով, զառիթափ և ուռուցիկ լանջերի գերակշռմամբ և գետերի ինտենսիվ էրոզիայով, որն առաջ է բերում լանջերի ապարների լվացում, որի հետևանքով լանջերի հավասարակշռված վիճակը խախտվում է: Հանրապետության տարածքի 64%-ը կամ 6173 կմ² ունի 300 մետրից ավելի մասնատման խորություն, իսկ տարածքի 46%-ը կամ 5257 կմ² ունի 500-1000 մ մասնատման խորություն, իսկ ամբողջ հանրապետության տարածքի համար այն հավասար է 470 մ-ի [2]: Սրանք լանջերի անկայունության համար բավականաչափ բարձր ցուցանիշներ են, հատկապես փխրաբեկոր նյութերի կուտակման շրջաններում, որտեղ առկա են բարենպաստ պայմաններ լանջն ի վար դրանց տեղափոխման համար: Կարևոր նշանակություն ունի նաև

